«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«19» հոկտեմբերի 2015թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____ Մ. Անանյան

N ԳԲԽ-37/15 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի 07.10.2015թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը, բողոքն առանց քննության և առանց հետևանք թողնելու մասին 13.10.2015թ. դիմումը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն) 07.10.2015թ. ներկայացված բողոքով «Նոր-Էներջի» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձորի քաղաքապետարանի կողմից հայտարարված «ԾՔ-ՊԸԱՇՁԲ-15/7» ծածկագրով էլեկտրոնային ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցության նպատակով հայտ է ներկայացրել «Նոր-

Էներջի» ՍՊԸ-ի և «Էկոլակտ» ՍՊԸ-ի կոնսորցիումը (այսուհետ նաև՝ Կոնսորցիում): Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.09.2015թ. կայացած նիստում ընտրված մասնակից է ճանաչվել «Բագրատունի» ՍԿ-ն, իսկ Կոնսորցիումի ներկայացրած հայտը մերժվել է՝ ընթացակարգի հրավերին չհամապատասխանելու հիմքով:

Ընկերությունը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 45-րդ և 48-րդ հոդվածները, խնդրել է դադարեցնել գնահատող հանձնաժողովի 23.09.2015թ. թիվ 2 և 01.10.2015թ. թիվ 4 արձանագրություններով ընդունված որոշումները:

Կենտրոնին ներկայացված 13.10.2015թ. գրությամբ Ընկերությունը խնդրել է առանց քննության և առանց հետևանք թողնել 07.10.2015թ. ներկայացված բողոքը:

2. ԳԲԽ-37/15 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի 13.10.2015թ. դիմումը, առաջարկում է Ծաղկաձորի քաղաքապետարանի կողմից Ծաղկաձորի քաղաքային զբոսայգու գլխավոր ճեմուղու լուսավորության համակարգի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԾՔ-ՊԸԱՇՁԲ-15/7» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.09.2015թ. թիվ 2 և 01.10.2015թ. թիվ 4 արձանագրություններով ընդունված որոշումները դադարեցնելու մասին «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի կողմից 07.10.2015թ. ներկայացված բողոքը թողնել առանց քննության:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման
բաժնի վարիչի ժ/պ՝ Լ. Հովակիմյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ԳԲԽ-37/15 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Մանուկյան